



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՀՐԱՄԱՆԸ**

25 ապրիլ 2018 թվականի N...*42-Ն*.....

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ, 41-րդ հոդվածներով, 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի ապրիլի 13-ի թիվ ԲՓ 31 «Շրջակա մրջավայրի վրա ազդեցության փորձաքննության» պետական փորձաքննական դրական եզրակացությունը, «ԶՈՒԴՈ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերության 2018 թվականի մարտի 07-ի թիվ 9 դիմումը, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի ապրիլի 18-ի թիվ Ֆ-135/18 գրությունը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

- «ԶՈՒԴՈ ՄԵՏԱԼ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն)՝ երեք տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/269 թույլտվությունը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Արջիձորի ոսկի-բազմամետաղային հանքերակման տարածքի (այսուհետ՝ տարածք) հետևյալ կոորդինատներով՝ 1.X=4326552.3 Y=8615143.3, 2. X=4326173.2 Y=8616127.1, 3.X=4326183.2 Y=8616933.9, 4. X=4326002.4 Y=8617147.7, 5.X=4325933.8 Y=8617192.1, 6. X=4325783.1 Y=8617097.9, 7.X=4325799.2 Y=8616957.9, 8. X=4325645.0 Y=8616289.8, 9.X=4325732.0 Y=8615824.3, 10.X=4325908.9 Y=8615422.6, 11.X=4326552.3 Y=8615143.3 (Տեղամաս 1՝ մակերեսը 90.0 հա), 1.X=4325901.3 Y=8613144.2, 2. X=4324942.8 Y=8613294.5, 3.X=4325190.6 Y=8613938.7, 4. X=4325174.4 Y=8614911.4, 5.X=4324999.8 Y=8615695.0, 6. X=4325543.4 Y=8615808.3, 7.X=4325802.8 Y=8615202.5, 8. X=4326087.4 Y=8614474.2, 9.X=4326006.6 Y=8613975.1, 10.X=4325901.3 Y=8613144.2 (Տեղամաս 2՝ մակերեսը 202.8 հա) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) սահմանափակված տեղամասերում՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:
- Կնքել տարածքի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):
- Ընդերքի գործակալության պետին՝

- 1) ծանուցել ընկերությանը՝ 5 օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը,
 - 2) հրավիրել ընկերությանը՝ 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,
 - 3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն, պայմանագիր, լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագիր),
 - 4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,
 - 5) սահմանված կարգով իրականացնել երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառումը՝ երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:
4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:
5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:
6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՍԱՐ



ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ